

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԹԻՎ 8 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 5-Ա**  
**«18» սեպտեմբերի 2023թ.**

**ԹԻՎ 8 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ**  
**ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի ԹԻՎ 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 23-Ա, թիվ 24-Ա և թիվ 25-Ա որոշումները՝ հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարումն արձանագրելու մասին և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի «24»-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը հաստատելու և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին» N 2-Ա որոշման 1-ին կետի՝

- 1) 36-րդ ենթակետից հանել «Գլեճյան Աղավնի Հայկարամի» բառերը.
- 2) 38-րդ ենթակետից հանել «Աբրահամյան Քրիստինե Ժորայի» բառերը.
- 3) 43-րդ ենթակետից հանել «Խաչատրյան Հովհաննես Արտուրի» բառերը:

***Թիվ 8 ընտրատարածքային ընտրական***  
***հանձնաժողովի նախագահ***

***S. Ավագյան***